

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե

3-4-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 110 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Երեխաները փորձում են նմանակել մեղվի՝

Ա. կափկափյունը Բ. բզզոցը Գ. մոնչունը Դ. կշկշոցը Ե. ճոռոցը

2. Պատասխանի տարբերակներից չորսը «բարեկամներ» են, իսկ մեկը նրանց հյուր է եկել: Ո՞րն է հյուրը:

Ա. դեղձ Բ. լուլիկ Գ. սմբուկ Դ. ճակնդեղ Ե. պղպեղ

3. Ի՞նչ բառ է պատկերված նկարելուկով:



3, 2 3 2, 4

Ա. աշուն Բ. կաթիլ Գ. տակաո Դ. կարիք Ե. տանիք

4. Ո՞ր տարբերակի ոսկին պետք կգա զարդ պատրաստելու համար:

Ա. Ոսկի հասկերով դաշտը ծփում է:

Բ. Ոսկի մարդ է Սահակը:

Գ. Այս դերձակը ոսկի ձեռքեր ունի:

Դ. Թագավորի գանձարանում ընդամենը մեկ ոսկի էր մնացել:

Ե. Վաչագանը ոսկի երազներ էր տեսնում:

5. Մեղվիկը հնարամտորեն թաքցրել է պատասխանը: Գտի՛ր այն:

ջրասարդ - ջարդ =

Ա. դար Բ. սանր Գ. սարդ Դ. սար Ե. արջ

6. Ուսուցչուհին աշակերտներին հանձնարարեց կարդալ հեքիաթներ: Երանուհին կարդաց «Երեք արջի հեքիաթը», Մարինեն՝ «Մոխրոտիկը», Հրայրը՝ «Հենգելն ու Գրետելը», Կարինեն՝ «Կոշկավոր կատուն»: Ի՞նչ հեքիաթ կարդաց Բագրատը:

Ա. «Հնարագետ ջուլիակը»

Բ. «Վիշապին հաղթողը»

Գ. «Բարեկենդանը»

Դ. «Ծիտը»

Ե. «Ձախորդ Փանոսը»

7. Օգտագործելով տառերը կամ տառանունները՝ կարդա, թե ինչ է գրված նկարելուկով:

Կ Դ Ն Ձ Գ

Ա. կանադական ձի

Բ. կենդանի ձուկ

Գ. կենտրոնաձիգ

Դ. կենդանու ձագար

Ե. կենդանու ձագ

8. Ո՞ր բառում հատապտուղ չէս գտնի:

Ա. ոսպնյակ

Բ. վերելակ

Գ. միամորիկ

Դ. անմոռուկ

Ե. մոշահավ

9. Հորդ գավակն է,

Բայց եղբայրդ չէ,

Եթե ուզում ես

Նրան ճանաչել,

Պետք է հայելին

Օգնության կանչես:

Ա. քույրս է

Բ. հորաքրոջս տղան է

Գ. երբեք չեմ տեսել նրան

Դ. ես եմ

Ե. ես այդպիսի հարազատ չունեմ

10. Անպատի նավ, ծովերի տիրակալ, գորշ հսկա, կենդանիների արքա: Ո՞ր կենդանին չնշվեց:

Ա. առյուծը

Բ. փիղը

Գ. ձին

Դ. ուղտը

Ե. կետը

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Մեղվիկի փոխարեն ընտրիր այն տարբերակը, որը կդառնա ձախակողմյան բառի վերջը և աջակողմյան բառի սկիզբը:

ՊԱՏ () ՈՐԴ

Ա. կեր

Բ. գամ

Գ. քար

Դ. վար

Ե. քեն

12. Գտիր Ներսես Ծնորհալու հանելուկի պատասխանը:

Տուն է սպիտակ, լայնատարած,

Մն հավիկներ մեջը թառած,

Խոսում են ու զրույց անում՝

Մարդու նման լեզու առած:

Ա. կավիճ

Բ. գիրք

Գ. փեթակ

Դ. հավանոց

Ե. բերան

13. Շլդիկի սիրած ո՞ր ուտելիքն է հնարամտորեն թաքնվել **ճագար, գնացք, խոզուկ, սկանջ, կարոտ** բառաշարքում:

Ա. կաղամբ

Բ. բազուկ

Գ. հագար

Դ. ճակնդեղ

Ե. գագար

14. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարում:

- Ա. երկու ոտքը մի մաշիկ դնել
- Բ. երկու ոտք ուներ, երկուսն էլ փոխ առավ
- Գ. երկաթը տաք-տաք են ծեծում
- Դ. կացինը քարին բերել
- Ե. երկու կրակի մեջ ընկնել



15. Նախադասության բառերը գրվել են առանց բացատների, ապա նախադասությունը կտրատվել է պատահական տեղերից, և կտորները խառնվել են իրար: Ստացվել է հետևյալ պատկերը՝ **դդում համ ար է ավան:** Ո՞րն էր այդ նախադասությունը:

- Ա. Ավանդդ ո՞ւմ համար է: Բ. Դդումի համը ավանդական է:
- Գ. Ավանի դդումը ո՞ւմ համար է: Դ. Անհամ է Ավանի դդումը:
- Ե. Ավանդի համար հարմար է:

16. Եթե ջնջես վանդակի այն տառերը, որոնք կրկնվում են հնգական անգամ, մնացած տառերով ո՞ր կենդանիների խմբի անվանումը կստանաս:

ե	ր	ա	մ	ր	տ
ու	ն	ե	տ	հ	ն
ր	ե	ո	ն	ու	տ
ու	տ	ե	ու	ր	ն
ն	ու	ր	տ	կ	ե

- Ա. աղվեսների Բ. գայլերի Գ. ոչխարների
- Դ. կովերի Ե. ձիերի

17. **Ժամը քանիսի՞ն էրկնքում ամպեր կուտակվեցին:** Պատասխանը թաքնված է հարցի մեջ:

- Ա. իննին Բ. հինգին Գ. վեցին
- Դ. ութին Ե. 3 անց 15 րոպեին

18. «Մի անգամ վինպինգը, գեբան, ծիվարը և լամջայր որոշեցին ընկերանալ և միասին ճամփորդել»։ այսպես սկսեց Նարեն իր հեքիաթը: Ինչե՞ր էր Նարեն հնարամտորեն թաքցրել հեքիաթի սկզբում:

- Ա. այլմոլորակայիններ Բ. թզուկներ Գ. սարեր
- Դ. ծաղիկներ Ե. թռչուններ

19. Ո՞ր բառի տառերի վերադասավորումով նոր բառ չես կազմի:

- Ա. ծառա Բ. վտակ Գ. սեղան Դ. կամար Ե. կավիճ

20. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

դհոլ, ազահ, բվեճ, գյուղ, եղև,



- Ա. վագր Բ. գով Գ. գանգ Դ. գարկ Ե. հատիկ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Վարդանը երկար մտածելուց հետո նկարները այս հերթականությամբ փակցրեց ալբոմում: Ի՞նչ կլինի պատկերված շարքի հաջորդ նկարում:



- Ա. դեկ Բ. ձուկ Գ. հավկիթ Դ. մատիտ Ե. ճյուղ

22. Խատուտիկն ասում է, որ իր անունը շատ հեշտ կարելի է ստանալ **խաղալիք, գիտունիկ, բոկոտիկ** բառերից, իսկ ի՞նչ բառ կստանանք **կարկաչուն, ականջոթ, սուրհանդակ** բառերից՝ նույն օրինաչափությամբ:

- Ա. մանուշակ Բ. կամրջակ Գ. կաչաղակ Դ. կարկանդակ Ե. վանդակ

23. Գրատախտակին գրված էին **արթնանալ, թաքնվել, պատշգամբ, ընդհամենը, գվարթ, ողջուն, հաղթանակ, թխվածքաբլիթ, ընթացք, աշխույժորեն, վախկոտ, ուղղարկել** բառերը: Գիտունիկը ջնջեց սխալ գրված բոլոր բառերը: Քանի՞ բառ ջնջեց նա:

- Ա. երկու Բ. երեք Գ. չորս Դ. հինգ Ե. վեց

24. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը: ԿՐԻԱ

Ա. 1864	Բ. 2975	Գ. 3086	Դ. 4197	Ե. 4536	+	ԿՐԻԱ
+	+	+	+	+		ԿՐԻԱ
<u>1864</u>	<u>2975</u>	<u>3086</u>	<u>4197</u>	<u>4536</u>		ԱՐԱԳ
3928	5950	6172	8394	9072		

25. Գնդիկի Բոքոնիկն ունի ութ խմորե գնդիկ, որոնց վրա գրված է մեկական տառ: Այդ տառերն են՝ **խ, հ, ն, ու, ց, ա, ց, թ:** Գնդիկի Բոքոնիկը քանի՞ գնդիկ պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը:

- Ա. 8 Բ. 7 Գ. 6 Դ. 5 Ե. 4

26. Մեղվիկների փոխարեն անհրաժեշտ տառն ու թիվը տեղադրելուց հետո այդ տառի ու թվի միավորումից ի՞նչ բառ կստանանք:

- Ա. պարս Բ. թութակ Գ. թուղթ
- Դ. չորսու Ե. թուրթ

Ծ	Գ	Գ	Ս	Ի
3	4	5	4	

27. Ո՞ր բառն է գաղտնագրված:

$$2^3 10^2 10^1 8^1$$

- Ա. հորթ Բ. երամ Գ. կատու Դ. խանութ Ե. վարդ

28. Ի՞նչ չես գտնի **վաճառասեղան** բառում:

- Ա. կահույք Բ. դերձակի գործիք Գ. խոտահավաքի գործիք
- Դ. սանձ Ե. զարգացում